

ՀՈՒՅՍԸ ՀԱՎԱՏԻՑ Ե ԺՆՎՈՒՄ

ՄԱՐԶԻ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի հանդիսարանը, որ արդեն բաժնի ամիս տխուր անդորրություն էր տիրում, անմիջապես լցվեց: Իսկ նրանք, ովքեր չկարողացան տեղ գտնել և մնացին դրսում, սպասեցին մինչև միջոցառման ավարտը: Մենք տեսանք, թե ինչպես նրանք շրջապատեցին ներկա գրողներին՝ ինֆորմացիա լսելու անհագ ցանկությամբ: Մարտիկ եկել էին մասնակցելու Ստեփանակերտի, մարզի ղեկավարների և հատուկ շրջանի պարետատան ներկայացուցիչների հետ հանդիպմանը: Անհնար է սպասիչ և անբողջական բնութագրել երկու ժամից ավել տևած հանդիպումը, հանդիպումից առաջ և հետո խումբ-խումբ հավաքված մարդկանց գրույցների խմատն ու բովանդակությունը: Հանրագումարվել էին նախորդ ամիսներին սպրած հույզերն ու տագնապները, հույսերն ու տատապանքները, ողջախոհ ու զգուն լինելու, ցավերին ու դավերին դիմագրավելու ձգտումները, շարունակական և վերջ չերևացող սպասումները: Եվ այս ամենին, ինչպես միշտ, ավելանում են մարզ այցելած տարբեր պաշտոնյաների ասուհարտորեն իրավիճակը բացատրելու, նախորդ ամիսների կատարվածը հակիրճ և հստակապի ներկայացնելու ճիգերը:

Հանդիպման թեման հրատապ էր, բոլորին հուզող: Այստեղից էլ քննարկման շիկացած, տաք մթնոլորտը:

Հավաքվածները մեկ բույե լուրջությամբ հարգեցին Հայաստանում երկրաշարժի հետևանքով գոհվածների հիշատակը: Հանդիպումը բացեց ՍՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատող Վ. Ա. Սիդորովը, որը խոսեց մարզում, մասնավորապես մարզկենտրոնում ստեղծված բազաբազային բարդ իրադրության, վերաբերակների տեղավորման գործում եղած պրոբլեմների, այդ կապակցությամբ մարզի ղեկավարության առաջ կանգնած խնդիրների մասին:

— Հայ ժողովրդի սպրած ղեկավարների 7-ի ողբերգությունը, — ասաց նա, — ցնցել է մեզ: — Այդ առթիվ մեր ցավակցությունը, մեր վշտակցությունը ձեզ՝ բոլորիդ: Թուք երկու արհավիրք, երկու երկրաշարժ եք տեսել: Առաջինը՝ երբ ստիպված լքել եք ձեր տները ու ձեր աշխատանքը, թողել եք ձեր ձեռքով տնկած ծառերը: Ծանր փորձություններ միջով եք անցել, գիտեմք: Ձեզ համար շատ

է դժվար: Այստեղ էլ, Լեոնային Դարաբաղում, փնակը ծանր է եղել: Այնուամենայնիվ, պետք է հշել, որ մարդիկ ձեզ հետ միասին իրենց ունեցածը, օգնել են ինչով կարողացել են: Ձեր գալը, խոստովանելը, ավելի է սրել այստեղ գոյություն ունեցող տրեմեական, սոցիալական, մշակութային բազմաթիվ չլուծված պրոբլեմները: Ձեզ հերիքում տեղերը դպրոցներում և մանկապարտեզներում: Ձեզ մասնագիտությամբ աշխատանքի տեղավորելը դժվար է, բնակարանային պրոբլեմը՝ սուր: Մարզի ունեցած ռեսուրսներն օգտագործելու դեպքում անզամ կացությունը ծանր է: Պետք է ելք գտնել:

— Փետրվար-դեկտեմբեր ամիսներին, — ասաց ժողովրդական դեպուտատների մարզային կոորդինատի մարզային Ս. Հ. Բարաբանը, — Ադրբեջանական ՍՍՀ քաղաքներից և շրջաններից մարզ են եկել ծննդով դարաբաղի շատ գաղթականներ: Ստեփանակերտում և շրջկենտրոններում սովետների գործկոմներում ստեղծվել են հանձնաժողովներ, որոնք գրառվել և գրառվում են եկածների աշխատանքի տեղավորման, բնակապահովման, բժշկական անհրաժեշտ օգնություն ցույց տալու հարցերով: Այնուամենայնիվ, առաջօր մարզկենտրոնի հյուրանոցում շարունակում են ապրել Շուշիից եկածները: Սույն գաղթիցիները, ինչպես նաև Բարսից և հանրապետության այլ շրջաններից գաղթածները չեն ապահովված բնակարանով, համապատասխան աշխատանքով: Իսկ շրջաններում աշխատուժի մեծ կարիք կա: Մարտակերտում, օրինակ, կարող են ընդունել և տեղավորել 190 ընտանիք, Հաղրոթում՝ ավելի քան 200, Մարտունիում՝ 150:

Ելույթներում խոսվեց նաև այն մասին, որ շրջաններում գաղթականների աշխատանքի տեղավորման և բնակապահովման հարցերը համեմատաբար հեշտ լուծելի են: Գյուղերում կան ազատ և լքված տներ, որոնք սիրով կտրամադրվեն եկածներին: Մինչդեռ ոմանք խուսափում են զնալ հեռավոր լեռնային գյուղերը, որտեղ իրենք ծնվել են, որտեղ առաջօր կանգուն են իրենց դատարկ պտղեմական տները: Անպայման քաղաքային դառնալու միտում է նկատվում: Այնինչ, մարզկենտրոնը ի փնակի չէ բոլորին տեղավորելու, և ձեռնարկվող միջոցառումները բավարար չեն պրոբլեմի լուծման համար:

— Մարզկենտրոնում շատ դժվար է ըստ մասնագիտության աշխատանքով բաղադրվել, — ասաց քաղաքապետի գործկոմի նախագահ Մ. Մ. Միրզայանը, — պետք է նաև հարմարվել: Իրադրությունն այնպիսին է, որ ուսուցիչը պետք է բանվորական արտահագուտ հագնի, ինժեները՝ շինարար աշխատի: Երեք ժամանակավոր գրադեցիներ ընկած ցած ազատ բանվորական տները, Դարմետաբակում 490, Կոչլի ֆաբրիկայում՝ 140, անդի ձեռնարկությունում՝ 35, նոր գործարարներ՝ 12:

Կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի երկրորդ քարտուղար Հ. Ա. Մեղրույանի առաջարկը գործնական էր: Թշուկատները իրենց աշխատատեղերը պետք է գծեն և արտասարկներին, մտնալով, ստեղծված իրադրության տպանկներում: Մինչդեռ այդ ուղղությամբ քայլեր չի եւ արված:

Ներքին գործերի մարզային վարչության պետ Ռ. Ս. Թումանյանը հշեց, որ վերաբերակներին կարող են ժամանակավոր աշխատանքի ընդունել նոգնիսկ ստանց մշտական գրադեցում, բայց անպայման հանձնաժողովի գործողմամբ: Ծանօթաբազային քաղաքային կենտրոններից համատեղ արշույնը Ստեփանակերտում ժամանակավոր գրադեցում մտայն: Պետեւը սա է բողորն էլ արշույն է ունենան գործող կանոնների համաձայն ձեռնարկված վերաբերակներ: Սա նաև գիւղերում քաղաքային տպանկները է:

Ստանձնաձեւատու-բնույթ ուներ երեխաների քաղաքի մասին խոսակցությունը: Հանձնաժողովի անդամները ճանապարհային՝ նրանք բողորն էր սովորելու են: Այժմ արդեն նոր եկածների համար պատրաստվում է նոր շենք, որտեղ հունվարի 10-ից կսկսվեն պարապմունքները:

Մեկը-մյուսի ետեւից դահլիճից հարցեր էին հնչում: Հարցերը բազմաթիվ էին, բաց մեջ ենք բերում նրանք, որոնք մասնավոր բնույթ չէին կրում:

ՀԱՐՑ.— Ես և շատ ուրիշներ ուրախությամբ կվերադառնայինք մեր հարազատ գյուղական տները, բայց այստեղ չափազանց դժվար է մթերքների հարցում...

ՊԱՏԱՍԽԱՆ.— Դուք կապահովվեք այնպես, ինչպես հիմնական բնակիչները: Մակարդակը սզնան էլ բարձր չէ, բայց հիմնականում համապատասխանում

է ընդհանուր նորմերին: ՀԱՐՑ.— Արդյոք կարելի է մեր թողած սեփական տները փոխանակել այն տների հետ, որոնք այստեղ մնացել են առանց տան տերերի:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Իհարկե, հարկ կլինի այդպես վարվել: Բաց և կեր շտապեմք: Հարկավոր է, որ ամեն ինչ օրենքով լինի: Եվ հաշվի առնել փոխանակել հնարավոր է միայն այն տները, որոնց շինարարությունը թույլատրված է եղել օրենքով:

ՀԱՐՑ.— Մենք թողել ենք ոչ միայն մեր բնակարանը, այլ անբողջ ունեցվածքը: Հիմա այդ ամենը ինչպե՞ս բերել:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Բաղգործկոմի հանձնաժողովը կազմում է բոլոր նրանց ցուցակները, ում տրանսպորտ է պետք իրենք փոխադրելու համար: Ավտոմեքենաների կազմակերպված շարասյուն է տրամադրվելու ձեզ, երբ որ իրադրությունը թողե՛ք տա կատարել դա:

ՀԱՐՑ.— Արդյոք կան այդ բոլոր ասածների կատարման երաշխիքներ:

ՊԱՏԱՍԽԱՆ.— Գաղթականներից ստեղծեք 5-6 հոգուց կազմված նախաձեռնող խումբ, որն էլ կմասնակցի վերաբերակեցման հանձնաժողովի աշխատանքին, կատաշարքի ձեր պահանջները:

Երկխոսությունը, փոխըմբռնումը նախագահության և դահլիճի միջև, սկզբում մեծ դժվարությամբ, այնուամենայնիվ, կայացավ, և հանդիպումից մարդիկ դուրս եկան ինչ-որ չափով թեթևացած, հույսի ու հավաստի ծնվող զգացումով:

Հանդիպմանը նշվեց, որ այսօր բոլորի համար էլ կարևոր է առաջիկայում կազմակերպվածություն ու կարգապահություն ցուցաբերել: Վարվա հաջողությունը կախված է ոչ միայն ղեկավարների հատակ ու նկուն աշխատանքից, այլև իրենց իսկ՝ բնակիչների գիտակցությունից՝ ծագող սրբութեաների լուծման նրանց աշխատանքային ախանդից: Օրվա գլխավոր խնդիրն է՝ ապահովել բոլոր ծառայությունների և ձեռնարկությունների հատակ աշխատանքը, գործի զգել ամեն մի հաստոց և մեքենա, արագացնել վագոների բեռնաթափման և բնակարանների շինարարության տնկ պերը: Սա է հաջողության գրավակներ: Միայն ամեն մեկի հրատակ աշխատանքն ու վեհանձնությունն են մոտեցնում վարվա հույսին:

Վ. ԳՈՒԳԻՆ
Ն. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ